# ԳԵԹՍԵՄԱՆԻ՜...

**ԵՂԻՎԱՐԴԻՆ**

«Նո՛ր սքանչելիք այսօր տեսանեմք յաշխարհի, ի մէջ հոգեղինաց. արարածք՝ Արարչին բացա-նութեան խորհին զխորհուրդ»:

ՇԱՐԱԿԱՆ

Գեթսեմանի՜, տրտում բաժակ արիւնի,
Ուր սիրտ մ'անմեղ, երկինքին դէմ քրտնաթոր՝
Ծունկի եկած՝ անդոհանքով կ'արիւնի,
Աստուածային սիրոյ հագած ձորձ ու շոր:

Գեթսեմանի՜, վատ մատնութեան դա՛ւ, համբոյր.
Կեղծիքի եւ ուրացութեա՜ն անարի
Գիշերիդ մէջ, զարհուրանքի մահաբոյր
Ողբերգութիւն մ'անհունօրէ՛ն կ'երկարի:

Գեթսեմանի՜, մութ պարտէզ սեւ եղեռնի,
Ուր Աստուած մը, նո՛ր սքանչելիք, երկրաւոր
Հոգիներու նայուածքին տակ կը մեռնի
Եղեռնական, պիղծ համբոյրին մէջ անոր՝

Որուն համար, պահ մը առաջ, մե՛ծ խորհուրդ,
Բարեկամի բացաւ սիրտը տրտմասուզ,
Եւ կաթեցուց բաժակին մէջ անյագուրդ,
Սրտի մաքուր ակէն պուտ մը արտասուք:

Գեթսեմանի՜, մահու բաժակ՝ մեկուսի
Ձորի մը մէջ, ուր կեանք մ'ահա խորտակուած,
Արտասուագոյ զոյգ աչքերով Յիսուսի,
Յոգնաթախիծ՝ կը պաղատի առ Աստուա՛ծ ...:

Հայրը՝ վերէն, Որդւոյն ճակտին՝ մեծ Յոյսին
Կուտայ համբոյրն միացումի, յարութեան,
Թէ օր մը հոն՝ պիտի ըլլան միասին,
Անմեկնելի՝ յաւիտեանէ՛ յաւիտեան:

Գեթսեմանի՜, մշտադալար ձիթենի՜,
Հոգիներու վրայ կաթող յոյսի ձէթ,
Երբ օր մը՝ նոր հագնիս փառքըդ հայրենի,
Յարութեան յոյս մըն ալ պահէ մեզի զէթ:

Գեթսեմանի՜, տրտում պարտէզ սեւ հողի:
Մութ, ահաւոր, մռայլ խորհուրդ մը ընդմիշտ,
Յուդայի հետ պիտի լայ ու կողկողի
Երկինքին ի վեր, դարերու դէմ ամբարի՛շտ:

(Պէյրութ, 1963) ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@